ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-3-4-Ա

ք. Երևան 09.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 9-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 27-ին արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված՝ Արմեն Վոլոդյայի Սմբատյանի (ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Գլաձորյան նրբ. 1, տուն 7, ԱՄ) «ARAR» (No20220751) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 33-րդ դասի ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման վերը նշված դասի ապրանքների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «ARARE WINEPARK ARMENIA» և «Արարէ» «Apape» «Apapэ» («Վայնփարք Արմենիա» ՍՊԸ Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, փ. 4, տուն 7 ԱՄ, N 29202, 22.07.2019թ. և N 31272, 12.08.2020թ.) ապրանքային նշաններին: «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի, 120-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 122-րդ կետերի համաձայն, բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել բառային ապրանքային նշանները, ինչպես նաև համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանի բառային տարրերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է «ARAR» համընկնող

բառով, տարբերությունը համակցված ապրանքային նշանի բառային տարրի վերջում առկա «է» տառն է, որն էական դեր չի կատարում ապրանքային նշանի ընկալման հարցում: Ինչպես նաև համեմատվող ապրանքային նշաններն ունեն իմաստային նմանություն, որը որոշվել է նշանների մեջ դրված նման հասկացությամբ, գաղափարով, այն է՝ Արար նշանակում է գործ, արարք, իսկ Արարէ-ն՝ գործել:

Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառումներին առ այն, որ ««ARAR»-իսպաներենից թարգմանաբար նշանակում է գութան, խոփ: “Arare” բառն իտալերենից թարգմանաբար նշանակում է փխրեցնել, վարել: Հայտարկված նշանը հայաստանյան սպառողների մոտ որոշակի առումով կարող է ասոցացվել որպես գործ, արարք, գործողություն: Հակադրված նշանն սպառողների մոտ իմաստային որևէ տպավորություն թողնել չի կարող, քանզի այն նույնիսկ իր հայերեն ձևով իմաստազուրկ է: Ենթադրվում է, որ մյուս լեզուներով “Arare” և “Արարэ” տարրերը ևս իրենց նշված թարգմանություններով հիմնականում ընկալելի չեն հայաստանյան սպառողների համար, առավել ևս որ դրանք ունեն բառարանային տարբեր նշանակություն», ապա ցանկանում ենք տեղեկացնել, որ Գրասենյակը համաձայն է այն դիրքորոշման հետ, որ համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն տարբեր իմաստներ իսպաներենում և իտալերենում, սակայն դրանք ընկալելի և հասկանալի չեն միջին հայ սպառողի համար իրենց այդ նշանակությամբ: Վերջիններս հայ սպառողների լեզվամտածողությամբ առաջին հերթին ընկալվում են որպես հայկական արմատ ունեցող բառեր, որոնք պարզապես գրված են լատինատառ, ավելին՝ ասոցացվում են «արարել, ստեղծել» բառերի հետ: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված այն նկատառմանը, թե «ներկայացված «ARAR» նիշը բառային է և հնչյունակազմությունը պետք է ընկալել անգլերեն կարդալու կանոնների համաձայն «ա՛-րար», իսկ «Arare՛»-ն համակցված նշանի բառային տարրն է, որն էլ կարդացվում է անգլերեն կարդալու կանոններին համաձայն «ա-րա-րէ՛» վերջին ձայնավորի շեշտադրմամբ», ապա ցանկանում ենք հայտատուի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ անգլերենի քերականության մեջ առկա չէ տառերի վրա շեշտադրում(ակցենտ) կատարելու կանոնը, ինչը շատ հաճախ հանդիպում է ֆրանսերենում բառի սեռն ընդգծելու համար: Վերոնշյալ լեզվում «e» տառով ավարտվող բառերը հանդիսանում են բաց վանկեր, որտեղ վերջինս համր է, այսինքն՝ չի կարդացվում, հետևաբար, այն անգլերենով նույնպես կարտասանվի «արար»: Իսկ «հայտարկված նիշը կատարված է լատինատառ ոճավորված և ստանդարտ մեծատառերի համակցությամբ և «A» տառերի ոճավորման ինքնատիպությունը հանգեցրել է նրան, որ դրանք ընկալվում են որպես «բաց» անկյուն ունեցող հավասարակողմ եռանկյուն, իսկ գրանցված նշանի բառային մասը կատարված է լատինական փոքրատառերով, որտեղ վերջին ձայնավորը շեշտադրված է և տառերն էլ իրականացված են առավելապես կլորացված տարրերով» դիտարկման վերաբերյալ

ցանկանում ենք նշել, որ բերված հակափաստարկները որոշակի չափով տարբերություն են հաղորդում համեմատվող ապրանքային նշաններին միայն վերջիններս միաժամանակ որևէ տեղ փակցված կամ միասին դիտարկելու դեպքում: Իսկ առօրյա պրակտիկայում օգտագործելիս, բանավոր խոսքում նիշերը զուգորդվում են միմյանց հետ, հնչելով նույնատիպ, ընդամենը մեկ տառի տարբերությամբ «Արար - Արարէ»: Ինչպես արդեն նշվել էր ապրանքային նշանի գրանցումը խնդրարկված 33-րդ դասի ապրանքների համար մերժելու հիմքում՝ կարգի 122-րդ կետի համաձայն, համեմատվող նիշերի բառային տարրերն ունեն ձայնային նմանություն և միմյանց հետ զուգորդվում են մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների՝ միմյանց նկատմամբ դասավորվածությամբ, տարբերվելով զուտ վերջին ձայնավորով, այն է՝ «ARAR» և «arare», «Արարէ, «Arare՛», «Արարэ՛», որն էլ էական դեր չի կատարում համեմատվող նիշերը մեկը մյուսից տարբերելու համար: Այս դեպքում ապրանքային նշանների նմանության հարցում որոշիչ դեր է խաղացել ապրանքային նշանների սկզբնամասերի համընկնումը, չնայած վերջավորությունների տարբերությանը, ուստի միջին սպառողը կարող է չտարբերակել մի ապրանքային նշանը մեկ այլ ապրանքային նշանից: Անդրադառնալով այն փաստին, որ «արարէ» բառը չունի բառարանային «արարել» իմաստը, ցանկանում ենք հավելել, որ, չնայած այդ հանգամանքին, այն միևնույն է միջին սպառողի մոտ կարող է առաջացնել «արարել» բառի ընկալման զգացողությունը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտում նշված՝ 33-րդ դասի ապրանքների համար որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման վերը նշված դասի ապրանքների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «ARARE WINEPARK ARMENIA» և «Արարէ» «Apape» «Արարэ» («Վայնփարք Արմենիա» ՍՊԸ Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, փ. 4, տուն 7 AM, N 29202, 22.07.2019թ. և N 31272, 12.08.2020թ.) ապրանքային նշաններին:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում մեկ կողմ յոթ դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված Արմեն Վոլոդյայի Սմբատյանի «ARAR» (No20220751) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ